

ԱՆԻՄԱՍՏ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ

Ա. — ԻՆՁ ԵՆ «ԹԻՔ»ԵՐԸ

Պատանիներ կան, որոնք առանց ուզելու, ներքին մղումէ մը վարեալ, արագ, յանկարծակի անիմաստ շարժումներ կը կատարեն խաղի կամ զբաղումի ընթացքին: Այսպէս, աչք կը թարթեն, յօնք կը պոստեն, գլուխ կ'երերցնեն, ուս կը թօթվեն, շրթունք կը խածնեն, եւայլն: Յրանսացիները Թիք (tic) կը կոչեն այդ շարժումները, որոնք կը կատարուին կամքէ անկախ, և կը կրկնուին անկանոն կերպով: Արդ, պէտք է գիտնալ որ հիւանդութիւն մըն է առիկա: Նախ կարծուած էր թէ Թիքը պարզ և անփաստ հիւանդութիւն մըն է, սակայն այսօր ընդունուած է թէ, «բնական շարժումի մը այդ ծաղրանկարը», որ Թիք կը կոչուի, արտայայտութիւնն է ներքին հոգեկան խորունկ հիւանդութեան մը: Ահա թէ ինչո՞ւ կարեւոր է լաւ հասկնալ այս հիւանդութիւնը, և արագ զարմանումի մը ենթարկել զայն:

* * *

Գրեթէ բոլոր հոգեբույժներն ալ զբաղած են այս հիւանդութիւնով: Ոմանք զանազան տեսակներու կը բաժնեն զայն: Տօքթ. Քրիւշէ երկուքի կը բաժնէ. 1) սովորութենական և 2) ջղաձգական: Սակայն պէտք է խոստովանիլ որ դժուար է այս բոլոր ձեւերը զանազանել իրականին մէջ: Տօքթ. Վաշէ առանց բացատրութեան բոլորն ալ ֆնասակար կը գտնէ, յանձնարարելով անմիջական դարմանում: Առանց մասնագիտական քննութեան ենթարկելու, աւելի լաւ է, ԲՈՒԺԱՆՔԻ ընթերցողներուն համար, յիշատակել ու նկարագրել այդ «անիմաստ շարժումները», ծանօթացնելու նպատակաւ զանոնք հայ ծնողներուն:

Թիք է՝

Աչքերը թարթել ակամայ, երեսը ծամածռել, յօնքերը պոստել, աչքերուն գունդերը դարձնել այս ու այն կողմ, քիթը «վեր քաշել», շրթունքները խածնել, պրկել կամ ծծել, գլուխ շարժել, ուս թօթվել, արմուկը վեր բարձրացնել, քիթը քերել, ճակատը չփել, մազերը քաշել, եղունգները կրծել (եղունգները կրծելու այս ունակութիւնը յաճախադէպ է պատանիներու մէջ, որոնք ընդհանրապէս խածնելով կը փրցնեն ալ ձեռքին եղունգները, մինչև որ մորթը արիւնի: Երբեմն ալ մէկ ձեռքին եղունգներովը կը կտրեն ու կը փրցնեն միւս ձեռքին եղունգները, տեղի տալով բորբոքումներու): Մանուկներ կան որ շարունակ ձեռքերնին կը տանին իրենց ծնողա-

կան գործարաններուն, մասնաւորաբար մանչերը, որոնք մատներով կը խաղան իրենց «պոչ»ին կամ այլ անուամբ «որդ»ին հետ, քաշելով և ոլորելով զայն, ինչպէս կատուն կը խաղայ իր պոչին հետ: Մանուկները ուրիշ գէշ ունակութիւն մըն ալ ունին, — ծծել իրենց մատները: Ֆրոյտ այս նշանին մէջ կը կարծէր տեսնել սեռային բռնազդին յագեցումը: Հոս տեղը չէ քննել թէ ո՞րքան ճիշտ է այդ կարծիքը: Նոյնպէս դժուար է ըսել թէ ըրտը այս յիշատակուած շարժումներուն մէջ ո՞րը Թիք է, ո՞րը ունակութիւն: Սակայն որոշ է, որ մայրերը չափազանց նեղութիւն քաշած են մոռցնել տալու համար երախտներուն այդ անմեղ ու անիմաստ շարժումները: Տօքթ. Գրիւշէ Թիքերուն մէջ կը դասաւորէ նաև երախտներու տեսակ մը առանց պատճառի և անտեղի հազը, թեւով քիթ խնջելը, բերնով անիմաստ ձայներ հանելը, հը՛, հը՛մ ձայնարկութիւնները, քիթով փչելը, բերնէն հայհոյանք փախցնելը, և, «ճիշտ շուններուն նման, որոնք փողոցին մէջ հանդիպած անկիւնի մը դէմ՝ թաթերնին կը բարձրացնեն կաթիլ մը մէզ թափելու համար, շատ մը տղոց անժամանակ և օրը քսան անգամ միգելը»:

Տօքթ. Վալէ, ինչպէս փրոֆ. Շարքօ, ընդունելով հանդերձ Թիքերու կապակցութիւնը հոգեկան ախտաբանութեան հետ, կ'աւելցնէ որ կարգ մը շարժումներ տարբեր պատճառներ ունին. այսպէս, աչքին մէջ օտար մարմինի մը գոյութիւնը տեղի կուտայ աչք թարթելու ունակութեան: Իներնին մէջ կամ չթունքներուն ետեւը փոքրիկ խոց մը կրնայ կծկում պատճառել չրթունքներուն: Գլխու և ուսի թօթիկները յաճախ հետեւանք են դնդերային ցաւի կամ հագուստին շփումին: Դարձեալ, ուշադրութեամբ պէտք է քննել այդ շարժումները, որովհետև երախտները կը սիրեն կապկել իրենց տեսած շարժումները, սովորութիւն դարձնելով իրենց: Այսպէս կան, որ աչք կը թարթեն, հետեւելով ուրիշին մէկ Թիքին:

Միւս կողմէ, պէտք է գիտնալ, որ Թիքերը ժառանգական են: Երբեմն վեհերոտ նկարագիրը եւս կը ստեղծէ զանոնք:

Ղեգամ մը եւս կրկնելէ յետոյ, թէ այդ անիմաստ և անմեղ շարժումները արտայայտութիւնն իսկ են հոգեկան և ջղային անհաւասարակշռութեան մը սկզբնաւորութեան, կ'արժէ որ խիստ ուշադրութիւն դարձնեն ծնողները: Յաջորդով պիտի խօսինք այդ շարժումներուն պատճառներուն և դարմանումին մասին:

ԲԺ. Ե. ԱՅՎԱԶԵԱՆ

ՊԻՍՏԱԿԻՆ ԱԼԻԻՐԸ. — Ֆրանսական բժշկական կաճառին ներկայացուած է Թէ պիստակին (ֆըստըխ) ալիւրը սննդական մեծ արժէք ունի, դիւրամարս է եւ առատ կենսամիւս կը պարունակէ: Այնպէս որ հացի պատրաստութեան համար ցորենալիւրին խառնուելով, չափազանց օգտակար կրնայ ըլլալ: